



*Члену-корреспонденту Национальной Академии наук  
Республики Армения, заместителю Главного  
редактора “Химического журнала Армении”  
Сурену Левоновичу Харатяну – 70 лет.*

*Поздравляем!  
Желаем всего-всего наилучшего!*

## ՍՈՒՐԵՆ ԼԵՎՈՆԻ ԽԱՂԱՔՅԱՆ (ծննդյան 70-ամյակի առթիվ)

Այս տարի լրացավ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, այրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ բղթակից անդամ **Սուրեն Խենի Խաղաքյանի** 70 տարին:

Ս.Լ. Խաղաքյանը 1966 թ. ավարտել է Շամշադինի շրջանի Բերդի թիվ 1 միջնակարգ դպրոցը և ընդունվել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետ, որն ավարտել է 1971 թ.-ին: Նրա գիտական գործունեությունն սկսվել է դեռևս ուսանողական տարիներին (1970 թ.) ՀԽՍՀ ԳԱ Քիմիական ֆիզիկայի լաբորատորիայում: Համալսարանն ավարտելուց հետո, 1971թ. ընդունվել է Հայաստանի ԳԱ Քիմիական ֆիզիկայի լաբորատորիայի ասպիրանտուրան և գործողվել ԽՍՀՄ ԳԱ Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի Չեռնոգոլովկայի մասնաճյուղ՝ այրման և բոցավառման տեսության բնագավառի հայտնի մասնագետ պրոֆ. Ա.Գ. Մերժանովի լաբորատորիա: Ասպիրանտուրան ավարտելուց հետո 1975թ.-ից նա աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում, որտեղ 1977 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, ստացել քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1977-1982 թթ. նույն ինստիտուտում եղել է «Այրման արոցեսների թերմոդինամիկայի և կինետիկայի» հետազոտական խմբի ղեկավար, իսկ 1982 թ. մինչև հիմա՝ «Բարձրջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզի (ԲԻՄ) արոցեսների կինետիկայի» լաբորատորիայի վարիչ: Իր գիտական աշխատանքների մի մասը նվիրված պինդ ֆազի մասնակցությամբ ընթացող արագընթաց քիմիական ռեակցիաների մակրոկինետիկային, նա 1995 թ. ներկայացրել է ՌԴ ԳԱ Կառուցվածքային մակրոկինետիկայի ինստիտուտում և պաշտպանել դոկտորական ատենախոսություն, ստանալով ֆիզ.-մաթ. գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2006 թ. նրան շնորհվել է այրոֆեսորի կոչում, 2010 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ բղթակից անդամ:

Պրոֆ. Ս.Լ. Խաղաքյանի գիտական աշխատանքները վերաբերում են անօրգանական պինդ նյութերի մասնակցությամբ ընթացող բարձրջերմաստիճանային արագընթաց քիմիական ռեակցիաների մակրոկինետիկային, դրանց առանձնահատկություններին՝ իզորեմ և ոչ իզորեմ պայմաններում, ինչպես նաև հետերոգեն համակարգերում այլման ալիքի տարածման, այրման կոնդենսված արգասիքների քիմիական և ֆազային բաղադրության և կառուցվածքագոյացման օրինաչափությունների պարզաբնանան:

Ս.Լ. Խաղաքյանի կողմից մշակվել ու տեսական հիմնավորում է ստացել պինդ-ֆազային այրման արոցեսների քիմիական խթանման եղանակը, ձևակերպվել են այրման խթանիչներին ներկայացվող հիմնական պահանջները: Դա թույլ է տվել զգալիորեն ընդլայնել տեխնոլոգիական

այրման սինթետիկ հնարավորությունները, մասնավորապես, հնարավոր է դարձել ԲԻՍ պրոցեսուներ կազմակերպել մի շարք թույլ էկզոթերմ համակարգերում ու առավել կառավարելի դարձնել այրման էքստրեմալ պայմաններում ընթացող քիմիական ռեակցիաների արգասիքների կառուցվածքագոյացման պրոցեսները:

ՀՀ ԳԱԱ Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում նրա ղեկավարած լաբորատորիայում մշակվել են նոր կերամիկական ու կոմպոզիցիոն նյութերի լայն տեսականու ստացման ԲԻՍ տեխնոլոգիական պրոցեսներ, ինչպես նաև մի շարք արժեքավոր մետաղական փոշիների (այդ թվում կորպալտ, նիկել, պղինձ, մոլիբդեն, ինտերմետաղական նյութեր) ստացման արդյունավետ եղանակներ:

Վերջին տարիների նրա աշխատանքներում մեծ ուշադրություն է դարձվում քիմիական ռեակցիաների կինետիկայի առանձնահատկություններին ոչ իզորերմ պայմաններում և տաքացման արագության ազդեցությանը ռեակցիայի մեխանիզմի վրա: Այդ խնդիրների ուսումնասիրման համար նախագծվել և պատրաստվել են նոր սերնդի էլեկտրաքենոգրաֆիական սարքավորումներ՝ էլեկտրոնային կառավարման ֆունկցիոնալ լայն հնարավորություններով և համապատասխան ծրագրային ապահովումով Windows միջավայրում: Մի շարք հետերոգեն ռեակցիաների օրինակով ցույց է տրվել, որ տաքացման արագությունը որոշիչ դեր ունի ռեակցիայի ընթանալու մեխանիզմի ու կինետիկայի, ինչպես նաև պինդ արգասիքների միկրոկառուցվածքի ձևավորման համար:

Պրոֆ. Ս.Լ. Խառատյանը միջազգային ճանաչում ունեցող գիտնական է, նա 400-ից ավելի գիտական աշխատանքների հեղինակ է: Նրա գիտական հորվածներից ավելի քան 100-ը տպագրվել են միջազգային բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում: Մեծ թվով գեկուցումներ է կարդացել տարբեր երկրներում կազմակերպված միջազգային գիտաժողովներում ու սեմինարներում (ԱՄՆ, Չինաստան, Իտալիա, Խաղանիա, Ֆրանսիա, Խորվաթիա, Հունաստան, Լեհաստան, Ռուսաստան և այլն): Վերջին 20 տարիների ընթացքում նրա ղեկավարած գիտական խումբը քիմիայի և նյութաբանության բնագավառում միջազգային հիմնադրամների կողմից հայտարարված մրցույթներում շահել է մեկ տասնյակից ավելի դրամաշնորհներ:

Մեծ է պրոֆ. Ս.Լ. Խառատյանի վաստակը երիտասարդ կադրերի պատրաստման գործում: 1998 թվականից նա դասախոսություններ է կարդում ԵՊՀ Քիմիայի ֆակուլտետում: Մեծ թվով ուսանողներ ուսումնառության տարիներին նրա աջակցությամբ ներգրավվել են գիտական հետազոտություններում, որոնց արդյունքները պարբերաբար գեկուցվել են հանրապետական ու միջազգային գիտաժողովներում: Նա ղեկավարել է մոտ 30 մագիստրոսական և 50-ից ավելի դիվլոմային ու ավարտական աշխատանքներ: Այդ գործընթացների արդյունքում պատրաստվել են բարձր

որակավորում ունեցող երիտասարդ գիտական կադրեր, որոնց մի մասը համալրել է Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի նրա ղեկավարած լաբորատորիան, ինչպես նաև աշխատում են արտերկրի առաջատար գիտական կենտրոններում: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են 14 թեկնածուական ատենախոսություններ ֆիզիկական և անօրգանական քիմիայի մասնագիտություններով: Ներկայումս ղեկավարում է 2 ասպիրանտի և մեկ հայցորդի աշխատանք:

Իր գիտական գործունեության ընթացքում պրոֆ. Ս.Լ. Խառատյանն արժանացել է ՀՀ ԳԱԱ և ԿԳՆ պատվոգրերի և մեդալների, ՌԴ ԳԱ Զենոգրոլովկայի գիտական կենտրոնի և ԲԻՍ միջազգային ասոցիացիայի դիպլոմի և մեդալի՝ գիտության ու կրթության բնագավառում ներդրման համար, 2008 թ. նրան շնորհվել է ՀՀ նախագահի մրցանակ բնագիտության բնագավառում:

Պրոֆ. Ս.Լ. Խառատյանը ակտիվորեն զբաղվում է նաև գիտակազմակերպչական գործունեությամբ: Նա որպես կազմկոմիտեի անդամ ակտիվ մասնակցություն է ունեցել մի շաբթ միջազգային գիտաժողովների կազմակերպմանը: Դրանցից են ԲԻՍ պրոցեսներին նվիրված 14 միջազգային գիտաժողովները (1991-2017թթ.), CIMTEC միջազգային կերամիկական կոնֆերենսները (Բատայիա, 2006, 2010, 2014, 2016, 2018), հայ-խրայելական գիտաժողովը (Հայաստան, 2005), «Ոչ իզոբերմ երևույթներ և պրոցեսներ» միջազգային գիտաժողովը (Հայաստան, 2006): Նա հանդիսանում է Intern. Journal of SHS միջազգային ամսագրի խմբագրական կողեգիայի անդամ (1995թ.-ից), «Տեխնոլոգիական այրում և նյութաբանություն» Հիմնադրամի հիմնադիր անդամ և գործադիր տեսօրեն (2004-2012), ԲԻՍ միջազգային ասոցիացիայի հիմնադիր խորհրդի անդամ և Հայաստանի ներկայացուցիչ (2003թ.-ից), «Հայաստանի քիմիական հանդեսի» գլխավոր խմբագրի տեղակալ (2008 թ.-ից):

Ներկայում ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Ս.Լ. Խառատյանը իր ղեկավարած գիտական խմբերով հաջողությամբ շարունակում է Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում և Երևանի պետական համալսարանում զարգացնել բարձրօրմաստիճանային ինքնատուարածվող սինթեզի ուղղությամբ տարրող գիտական և կիրառական նշանակության աշխատանքները:

ՎՎ ԳԱԱ «Քիմիական և Երկրի մասին գիտությունների» բաժնանունքը, ՎՎ ԳԱԱ Ա.Բ. Նալբանդյանի անվ. Քիմիական ֆիզիկայի ինստիտուտը, «Նայաստրանի քիմիական հանդեսի» խմբագրական կողեգիան և հանրապետության քիմիական հասարակությունը սրբանց շնորհավորում են Սուլեն Ալոնի Խոստարյանին հոբելյանի առթիվ՝ մաղթելով նրան անսպառ եռանդ, ակրիվ սպեղծագործական աշխատանք և բարորություն: